



«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆԵՒ ԳԱՆ.» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1888

ԹԻԻ 7

ՓԻՆՆԻԿԵՑԻ ՆԱԻ ՄԸ

Եթէ զննենք կոստանդնուպոլսոյ առջև և կամ Սև ծովու կամ Միջերկրական ծովու որ և իցէ զլիսաւոր նաւահանգիստներուն մէջ խարխիս նեւաւոց նաւերը, պիտի հասկնանք դրօշակներէն թէ անոնք կը վերաբերին զանազան ազգաց որոց խրաքանչիւրը կը ջանայ բաժին մը հանել իրեն աշխարհիս վաճառականութենէն: Ասկէ 3,000 տարիներ առաջ, նաւեր կ'այցելէին այս նոյն նաւահանգիստները, բայց չէին նման այս օրուան մեծ նաւերուն, և ոչ կը վերաբերէին որ և իցէ այն ազգաց որոց դրօշակները կը տեսնենք հիմա: Կը կարծուի թէ այն նաւերն էին պատկերին մէջ ատենուածներուն նման, թիւրով շարժող, բայց առագաստ ալ կը պարզէին երբ հովը նպաստաւոր ըլլար: Կը վերաբերէին փրենկեցոց որոց քաղաքները, Տիրուս և Սիդոն, աշխարհիս ամենէն հարուստ քաղաքներն էին: Բաց ի Աստուածաշնչէն չունինք ուրիշ զիւր օրուն պատմութիւնը համեմի մինչև անոնց փառաւորագոյն օրերը, բայց գիտենք որ անոնք կը բերէին մեծ տարս և գոհարեղէններ Չինաստանէ, համեմներ՝ Հնդկաստանէ, արծաթ՝ Սպանիայէ, փղոսկր և գերիներ՝ Ափրիկէէ, և, ինչպէս կը կարծուի, անագ: Մեծն Բրիտանիայէ՝ Կիսնըք որ փիրամի Տիրուսի թագաւորը, բարեկամ էր Սոլոմոնի, և անոր նաւերովը բերուեցաւ Սողոմոնի հարստութիւնը: Նաև փրենկեցի նաւով հաւանականապէս Յովնան փորձեց փախչել Տերոջը հրամանը կատարելէ, երբ ծովը նետուեցաւ ճամբուն վրայ:

Փրենկեցոց քաղաքներուն կործանումը պատիժ էր անոնց մեղաց, և զայն մարդարէացած էին Եսայի և Եղեկիէլ: Տիրուս կրկին և կրկին նուաճուեցաւ երկար պաշարումներ կրելէ



ՓԻՆՆԻԿԵՑԻ ՆԱԻ ՄԸ

ետքը, և երբ Մեծն Ալեքսանդր առաջայն եօթն ամիս պաշարելէ յետոյ, սպաննեց անոր բնակիչներէն մէկ մասը և ծախեց մնացածները իբրև գերի: Տիրուս թէպէտ անորէն չինուեցաւ, սակայն բնաւ վերստին ձեռք չբերաւ իւր նախկին կարևոր աստիճանը:

Փրենկեցի նաւաչէնք, թերևս այնչափ յարգ ունէին որչափ ունին այս մեր օրերուն մէջ մեծ շողեաններ շինողները: Չկայ մեծ դիւտ մը որ իսկոյն կատարելագործուի, բայց խորքանչիւր դար օգուտ կը քաղէ իրմէ առաջ անցող բոլոր դարուց գործերէն: Փրենկեցոց նաւերուն վրայ

հետզհետէ քիչ-քիչ զարգացում և դաւ մինչև որ պատրաստուեցան այս օրուան շողեաններու ահագին տորմիդները:



«ՎԻՇԻՆԻՐՈՒԹԻՒՆ ՄԻ ԸՆԵՔ»

Արևելեան պատմութիւն մը կայ թէ ինքնակալի մը գոռոզ մէկ սիրականը մինչ կ'անցնէր՝ քար մը նետեց աղքատ տէրվիչի մը վրայ: Տէրվիչը չհամարձակեցաւ քարն առնուլ և նետել իրեն նետողին վրայ, վասն զի զիտէր որ այն մարդը շատ զօրաւոր էր: Ուստի առաւ քարը և զգուշութեամբ դը-

րաւ իւր գրպանը, ըսելով ինքն իրեն. «Վրէժխնդրութեան ժամանակը կու գայ օր մը, և ես այն ատեն կը լուծեմ վրէժս:» Այնուհետեւ շատ չանցաւ, այս նոյն Տէրվիչը մինչ ժուռ կու գար քաղաքին մէջ, տեսաւ որ դէպ իւր կողմը կը մտնենար մեծ բազմութիւն մը: Արտորաւով գնաց տեսնել թէ ինչ կար, և ահա իմացաւ, ի մեծ զարմացումս իւր, որ իւր թշնամին, ինքնակալին սիրականը, որ ինկած էր թագաւորին աչքէն, ուղտի մը վրայ հեծցուցած կը պըտըտցունէին ի տես հասարակութեան, որպէս զի նշաւակ ըլլար ժողովրդեան ծագուն և կատակներուն: Տէրվիչն արտորնօք ձեռքն առաւ քարը զոր կը կրէր իւր գրպանը, ըսելով ինքն իրեն. «Ահա հիմա եկած է իմ վրէժխնդրութեանս ժամանակը, և պիտի հատուցանեմ անոր իւր դէպ յիս չար վարմանց փոխարէն:» Բայց վայրկեան մը մտածելէ ետքը, քարը նետեց մէկոյի, ըսելով. «Վրէժխնդրութեան ժամանակը բնաւ չգար, վասն զի եթէ մեր թշնամին զօրաւոր է, վրէժխնդրութիւնը ինչպէս յիմարական՝ նոյնպէս և վտանգաւոր է, և եթէ սկար է և թշուառ՝ յայնժամ վրէժխնդրութիւնն է յիմարութեանն աւելի դէշ. նուաստ է և անգութ: Եւ ամէն պարագայից մէջ արգելուած է և չար:»

քէ կը զրկեն որպէս զի իրենց կեանքը պահեն: Բայց անոնցմէ քիչեր կան որ ոյժ և համարձակութիւն ունին մարդու վրայ յարձակելու, և անոնցմէ ոմանք են մարդուս անոցին ծառաներ: Մենք ամէնքս ալ զիտենք թէ ինչպէս օգտակար են կատուները որ առ-

տի ըլլային մեծ աղէտ այն կողմանց եթէ չգտնուէին հոն միջնակեր կոշուած կենդանիք որ գրեթէ միայն մըրջիւններով կ'ապրին: Մըջնակերներուն ամենէն խոշոր տեսակը կը գըտնուի Հարաւային Ամերիկայի աւելի տաք մասերուն մէջ. անոնցմէ միոյն



ՄԵԾ ՄԻՋՆԱԿԵՐԸ

Բնութեան մէջ զարմանալի բաներէն մին այս է որ շատ կենդանիներ կ'ապրին ուրիշ կենդանիներ ուտելով: Կան փոքրիկ միջատներ, ինչպէս լուն, մյուկը, ոճիւր և մծեղը, որ կ'ապրին իրենցմէ մեծ կենդանիներէ սնանելով բայց ոչ թէ մեծ փնաս տալով անոնց: Կան նաև աւելի մեծ կենդանիներ որ կը կերակրուին իրենցմէ փոքր կամ արկար կենդանիներ ուտելով, զորս կեան-

ՄԵԾ ՄԻՋՆԱԿԵՐԸ

նէաներ և մուկեր կը սպաննեն, նաև քանի մը տեսակ թռչուններ, որոց ուտեստն են միջատներ որ կ'ուտեն հունձքերը: Բայց պատկերին մէջ կը ցուցուի ուրիշ մը զոր զիտեմ թէ մեր ընթերցողներէն ոչ ոք տեսած է: Այլեցամ Գօտուոյն սակ գանուող երկիրներուն մէջ միջիւնք շատ աւելի մեծ են և թուով աւելի շատ քան որչափ թուրքիոյ միջիւնները, և անշուշտ պի-

պատկերն է զոր կը տեսնէք հոս: Ա՛հ բողջ մարմինը բացի զլիւնն, ծածկըւած է երկայն և հաստ մազերով, և ունի երկայն և թաւամազ պոչ մը: Ականջները և աչքերը շատ մանր են, և իւր գլուխը երկայն ձևով է և սրածայր կը վերջանայ փոքրիկ բերնով մը որ չունի սկուայ: Ունի երկայն և գլանաձև լեզու մը զոր դուրս կը հանէ և որ կ'երևի կարմիր ճճիի նման,

գայարեւոյ այս և այն կողմը իբր թէ ինք իրմէ գատ կեանք ունի: Երբ կը մղէ զայն մըջնոց բոյնի մը մէջ, մըջիւնք կը խռնին անոր բոլորտիքը, և կը փակչին անոր վրայ, վասն զի կաշուն է ստւընձի նման, և մըջնակերը արագ մը իւր բերանը կը տանի զայն: Յետոյ գարձեալ կը մղէ հոն ուրիշներ ալ որսալու համար:

Այս կենդանիին առջևի ոտքերը ունին շատ սուր ճիւղաններ, որոցմով կը փորէ մըջնոց բոյնը, և քայսած ժամանակը կը ծայլէ կամփոփէ ճիւղանները, զանոնք սուր պահելու համար, և կը կոխէ ոտքերուն գուրսի կողմերուն վրայ:

Մըջնակերը թէպէտ չունի ակուպ, բայց չվախնար միւս կենդանիներէն: Առջևի ոտքերը ունին շատ զօրաւոր մկաններ, և երբ ուրիշ կենդանի մը յարձակի վրան, կը բռնէ զայն իւր ճիւղաններով, և սեղմելով կը սպաննէ: Մեծ մըջնակերի մը ամբողջ երկայնութիւնն է իւր դուռկին (քրթիկն) ծայրէն մինչև պոչին ծայրը՝ 7 կամ 8 ոտք:

ՓՈՒԱՐԷՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ

Քանի մը տարի առաջ ամարուան գեղեցիկ առաւօտ մը սիրուն դէմքով երկու տղայք ժուռ կու գային Շրէտի հարաւային ծովեզերաց ձօտ ընդարձակ նշանաւոր պանդոկի մը դէմ եղող քարափին վրայ: Յանկարծ անոնցմէ մին կեցաւ, և շուտ մը ծուրով առաւազին մէջէն գեղեցիկ գնդասեղ մը մահակաձև (նոր լուսնի ձևով) որոյ վրայ շքեղ աղամանդներ կային:

Չեռքն առնելով՝ վեր բարձրացուցած աղաղակեց, «Ո՛հ, Քարլ, նայէ ի՛նչ գտայ»: «Ի՛նչ կ'ըսես, Ոթոն», ըսաւ ընկերը, «ատոնք աղամանդ են, տաւրակոյ չունիմ, վասն զի չկայ բան մը որ ատոնց չափ փայլի»: Եւ դուն հիմա հարուստ չե՞ս. դուն երբ որ ուղես կրնաս շատ ստակ ձեռք բերել քանի որ այդպիսի գնդասեղ մը ունիս»: «Ի՛նչ կ'ըսես, Քարլ», ըսաւ Ոթոն յանդիմանելու ձևով, «ի՛նչ ըսել կ'ուզես ատով. այս գնդասեղն իմ չէ: Տարակոյս չունիմ թէ այս է պանդոկին մէջ գտնուող մեծատուն տիկնանց մէկուն, և ես պիտի ջանամ գտնել տէրը»: «Պարապ խօսք. քեզի վարձ մը պիտի չտայ այն: Թերևս չընորհակալ եմ՝ մը անգամ պիտի չըսէ քեզի՝ կրած աշխատութեանդ փոխարէն, և յետոյ պիտի զղջաս որ յիմարի պէս դացիոր անոր տուիր գնդասեղը»: «Ո՛նչու չոր բաւական վարձատրութիւն է ինձ եթէ խիղճս դովէ գիս թէ աղէկ ըլլի», ըսաւ Ոթոն, «մինչև անգամ


եթէ նորհակալութիւն մը չյայտնեն ինձ ըրածիս փոխարէն»:

Ոթոն խօսին դնաց պանդոկը, և հոն ըսաւ թէ ինչ գտած էր, և պանդոկապետին ձեռքին մէջ դրաւ այն մահակաձև գնդասեղը: «Ոգնի՛ւ պատանի, ագնի՛ւ պատանի», գոչեց պանդոկապետը: «Այո, տղաս, այս գնդասեղը կորսնցունող տիկինը հոս այս յարկին ներքև կը գտնուի: Կեցի՛ր հոս, մինչև որ իմացունեմ անոր. դիտեմ որ պիտի ուզէ տեսնել քեզ»:

Պանդոկապետը շուտով ետ դարձաւ և տարաւ աղան ճոխապէս զարգարուած սրահ մը, ուր փառաւոր տիկին մը կը սպասէր տեսնել զնա: «Նորհակալ եմ՝ քե՛նէ, աղէկ», ըսաւ տիկինը, «ինձ գարձուներու համար

երթան յիշեալ քաղաքը: Իսկոյն ճամբայ ելան անոնք, և երբ հոն հասան, գտան իրենց բնակութեան համար պատրաստուած անակ մը, և թագաւորին պատգամաւորն ըսաւ թէ այն տնակն անոնց բնակարանը պիտի ըլլար այնուհետև: Յաջորդ օրը պարատ կանչուեցան, և ներկայացուեցան թագաւորին, որ խմանալով թէ Ոթոն փախաք ունէր երաժիշտ ըլլալու, ըսաւ թէ պէտք է որ անմիջապէս սկսի իւր ուսմանց՝ կարող ուսուցչէ մը դաս առնելով: Տարր տարի յետոյ այս տղան եղաւ Սըր Ոթոն, երաժշտութեան ուսուցիչ արքունի բնտանեաց, և տէր հարստութեան և համբաւոյ:

Բայց պիտի ըսէք թերևս, «Ոթոն՝ թագաւոր մը ունէր իւր աղնիւ գոր-



ՊՈՒՐԷՆ ԳԱՆՔԻ ԵՍՎԻՆՈՆ

այս գնդասեղը զոր շատ կը սիրեմ, ինձ ըսած են թէ հայրդ մեռած է, բայց մայրդ տակաւին ողջ է, և թէ բուր թղթ կարողութեամբ կ'աշխատիս օգնել անոր: Գնա անոր, և ըսէ թէ ես կ'ըսեմ որ ինքն իրաւունք ունի պարծելու քեզի նման զաւակի մը մայր ըլլալուն համար: Եւ շուտով պիտի վարձատրուիս նորհակալութիւններէ աւելի աղէկ բանով մը, վասն զի Շուետի թագուհին բնաւ չէ ասելու քիտս»:

Տղան երկիւղով բռնուած՝ տեսնելով որ կը գտնուէր թագուհւոյն առջև, շուարեցաւ մնաց և կարող չեղաւ պատասխան մը տալ, այլ միայն հաղիւ ընել խոնարհութիւն մը և ելլել սենեակէն դուրս:

Այս դէպքէն քանի մը օր ետքը թագուհին և իւր ծառանները գարձան Սթոքհոլմ, Շուետի մայրաքաղաքը, և անկէ շարժած մը ետքը հրաւէր եկաւ թագաւորէն որ Ոթոն և նորա մայրը

ծին համար վարձատրութիւն ընող» Դուք միթէ չունիք թագաւոր մը՝ թագաւորաց թագաւորը, որ վարձատրէ զձեզ ձեր ամէն մէկ աղնիւ գործին համար՝ թէ՛ մեծ թէ՛ պղտիկ: Վստահ եղիք որ եթէ ընէք ինչ որ ուզիք է, պիտի ընդունիք անոր վարձքը:

ԱՎԻՆՈՆ

Մենք կաթովիկ եկեղեցւոյ կ'ըսենք Հռոմայ եկեղեցի, բայց եղաւ ժամանակ, իբր 70 տարի, երբ Պապը կը բնակէր ուրիշ տեղ: Ուն գետոյ եղեցուց վրայ շինուած է Ավինտոն, Գաղիկան քաղաքը, ուր եղաւ «Սուրբ Աթոռին Բարբիտեան գերութիւնը», որպէս կը կոչեն կաթովիկ մատենադիրք, բայց և այնպէս այն չէր գերութիւն, ինչպէս հիմա չէ այժմու Պապին վիճակը: 1305 ին Պապ ընտրուեցաւ Պէրդուան, Գաղիացի արքեպիսկոպոսը, և կարգինալաց շատերն էին

Գաղղիացի ուստի յօժարութեամբ ընդունուեցաւ Գաղղիոյ թագաւորին, փիլիպպոս Գեղեցիկի, հրաւերը, փոխադրել ի Գաղղիա Կաթողիկոսի աշխարհին հոգևոր մայրաքաղաքը, և շինել երկրորդ վատիկան մը յԱլիքներն: Պապն ըլլալով ամբաւ հարստութեան տէր, գնեց քաղաքը կամուսնիէ մը որոյ ստացուածքն էր այն, և 1309է մինչև 1377 Պապերը նստան հոն: Գրիգորիոս Պապ իւր վերջին տարին աթոռը փոխադրեց Հռոմ ուր մեռաւ քանի մը ամիս ետքը, և այնուհետև 30 տարի կային երկու իրարու հակառակ Պապեր, մէկը Հռոմ և միւսը Ալիքներն: Պապական հին պալատը որ կը տեսնուի պատկերին մէջ, աղէկ պահուած է, բայց աւելի կը նմանի ամրոցի քան թէ պալատի: Հիմա կը գործածուի իբրև զօրանոց և բանա: Կը մնան աւակին նաև քաղաքին հին պարիսպները: Այս վաղեմի շէնքերուն քով Ռոն գետոյն վրայ կը տեսնուի գեղեցիկ կամուրջ մը, որ շինուեցաւ ասկէ 40 տարի առաջ: Քաղաքը մնաց իբրև յատուկ ստացուածք Պապերուն մինչև ասկէ 100 տարի առաջ պատահած Յեղափոխութիւնը:

ՎԵՐ ՆՍՅԷ

Երբեմն աղէկ է նայիլ Ներսէս, տեսնելու համար թէ մենք ինչպէս մեղսալից ենք և կարօտ, աղէկ է նայիլ Գործ, տեսնելու համար թէ մեղի աւանդու համար որչափ գործ կայ ընելիք, բայց ասոնց ամենէն աղէկն է նայիլ վեր: Թերևս մենք չափէն աւելի կը նայինք Ներսէս և Չոյ, բայց կարելի չէ մեզի շատ նայիլ վեր: Նաւաստին երբ կայմի պարաններէն վեր կ'ելլէ՝ վեր կը նայի: Գիտէ թէ վտանգաւոր է վար նայիլ բայց ապահով է նայիլ վեր: Նայելով վար ալեկոծեալ ջուրերուն վրայ, թերևս գառնայ դլուխը, կորնցունէ իւր հաւասարակշռութիւնը և գլորի վար: Անգամ մը նաւապետ մը իւր տղան հետ առաւ երբ ծովային ճանապարհորդութիւն պիտի ընէր: Օր մը տղան նաւուն կայմերուն վերի ծայրն ելաւ: Երբ բարձրը կը գտնուէր ծովէն վեր՝ վար նայեցաւ և գլուխը դարձաւ: Խիղիս օգնութիւն աղաղակեց: Հայրը տեսնելով անոր վտանգը, պրոպան անոր ըսելով որ վեր նայի: Տղան վեր նայեցաւ և աղափուեցաւ վար իյնալէ: «Գիտի կը բարձրացնեմ իմ աչքերս, ո՞վ երկնից մէջ բնակող», կ'ընէ իւրայելի քաղցր Սաղմունք երգողը: Ինչո՞ւ համար պէտք է մեզի վեր նայիլ: Վասն զի Աստուած վերն

է: Վասն զի մեր երկնաւոր Հայրը վար կը նայի: Վասն զի երկնից փառքը գէպ ի վեր կը քաշէ զմեզ: Վասն զի մեր փրկիչը վերը երկնքն է, և հոն են նաև շատեր որ շատ սիրելի են մեզի, որք կը սպասեն մեզի և կը նային մեր վրայ: Ուստի մենք պարտիմք մեր բոլոր կենաց մէջ նայիլ վեր: Կը ճանչնայի տղայ մը որ միշտ վար կը նայէր: Աչքը գետինը կ'ուղղէր երբ կը քայլէր, միայն խորհելով թէ ինչ կը նար գտնել գետնէն: Օր մը գտաւ քաւորդ մէծիտ մը, ուրիշ օր մը՝ գեղեցիկ ոսկեպատ գնդասեղ մը: Ո՞րչափ աւելի որ բան կը գտնէր գետնէն, այնչափ աւելի կը նայէր գետինը: Այն տղան աշուրները աշխարհիս վրայ սեւեռած էր իւր բոլոր կենաց մէջ, Գրիստիանոսին ճամբորդութեան գիրքին մէջ ներկայացուած մարդուն նըման, որ խելքը միտքը տուած էր իւր ձեռքի քերոցով հաւաքել փայտի կըտորներ, խեցի և յարդ և երկրիս աւնարժէք և մնտի բաները, մոռնալով նայիլ վեր գէպ ի փրկիչը որ իւր քով կը կայնի և կը մատուցանէ անոր թագ և թագաւորութիւն: Յիշեալ տղան այնչափ կը նայէր վար որ փափաք ունեցած չէր նայիլ Գրիստոսի և գէպ երկնք: Շատ ստակ հաւաքած էր վար նայելով և ժողովելով, բայց շատ չընէր, Աստուծոյ նախախնամութեամբ կորսնցուց գրեթէ իւր բոլոր ստացածը, և կ'աղօթեմ եռանդով որ հիմա սկսի նայիլ վեր: Կը ճանչնամ ուրիշ տղայ մը (հիմա յիշուածին եղբայրը) որ իրեն սովորութիւն ըրած էր վեր նայիլ: Կը նայէր վեր՝ ծառերուն, բլուրներուն, թռչուններուն, ամպերուն, երկինքին, արևուն, աստղերուն որ իրմէ վեր են, և կը խորհէր զանոնք ամեն ստեղծող Աստուծոյ վրայ: Կը նայէր վեր՝ Գրիստոսի, և գտաւ հանգիստ, ուրախութիւն և զօրութիւն, և այս տղան այսօր է Աւետարանի պայտօնեայ մը, և կ'երթայ յառաջ նայելով վեր: Մեծ տարբերութիւն կայ վար նայելուն և վեր նայելուն մէջտեղ: Վար նայելը մեզ կ'ընէ աշխարհատէր և անձնապաշտ միայն: Վեր նայելը՝ կ'ընէ մեզ սուրբ և զօրաւոր: Աղէկ է մեզի համար յիշել միշտ թէ Աստուած միշտ կը նայի վար: Կը տեսնէ մեզ թէ՛ մութի և թէ՛ լուսոյ մէջ, թէ՛ առանձին ըլլանք՝ թէ՛ բազմութեան մէջ, թէ՛ տունը՝ թէ՛ դուրսը: Երեկոյ մը հայր մը իւր տղան հետ առնելով գնաց ցորենի արտ մը այն նպատակաւ որ գողնար տոպրակ մը ցորեն: Զգուշու-

թեամբ նայեցաւ ամէն կողմ որպէս զի վտան ըլլար թէ ոչ ոք կը տեսնէր զնա: Երբ իւր տոպրակը լեցունելու մօտ էր, իւր տղան որ կիրակնօրեայ դպրոցի աշակերտ էր, ըսաւ, «Կեցիր հայր, մոռցար տեղ մըն ալ նայիլ», «Ո՞ր», հարցուց հայրը: «Մոռցար նայիլ վեր», Մարդն աճապարանօք պարպեց տոպրակը և գնաց տուն, խոր տպաւորուելով իւր մտաց վրայ «Մոռցար նայիլ վեր», խօսքը: Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Մովսէս, Դաւիթ, Եղիա, առաքեալք, մարտիրոսք և ամէն դարու բարինները երկնքն են, վասն զի կը նայէին վեր: Այն տղան կամ աղջիկը որ կ'աղօթէ, որ կը կարգայ Աստուծոյ խօսքը, որ Աստուծոյ տունը և կիրակնօրեայ դպրոց կ'երթայ, և կ'ապաւինի Գրիստոսի և կը ջանայ նմանիլ անոր և օրհնութիւն ըլլալ ուրիշներու, վեր կը նայի և կ'ելլէ վեր:

ՊԱՏԱՍԻԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Յունիս ամոց հանելուկին պատասխանն են հետագայ բառերը կարգաւ:

Արիստու, Աբրամ, Իմ, Բարաքիա, Աբիաթար, Փողոստ, Բաազաթ, Մեհարեմ:

Լուծեցին՝ Պարտիզակ, — Սուրբ Տ. Ստեփանան, Կարապետ Զ. Աստուած, Լուսն Յ. Թոբեան:

ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ՍՈՒՐԲԻ ԳԻՐՔԷՆ

ՍՈՂՈՐՈՒՆԻ ՄԷԿ ԱՌԱՎՈՂ

- Ես կը բաղկանամ 65 գրեթէ
- Իմ 1. 2. 62. 43. 26. 17. 15. 56. 61. 35. են մարգարէի մը երկրորդ անունը:
- Իմ 5. 44. 42. 46. 49. 52. են քահանայ մը:
- Իմ 48. 37. 38. 62. 46. 57. են գործի մը որսորդաց:
- Իմ 41. 53. 54. 39. 49. 40. են ծաղիկ մը:
- Իմ 21. 26. 3. 65. են Յովնանու թռչունորդաց մին:
- Իմ 6. 49. 50. 45. 32. են Դաւիթի որդւոց մին:
- Իմ 4. 61. 42. 45. 44. 30. 49. են մարգարէի մը հայրը:
- Իմ 57. 4. 64. 22. 47. 7. 23. են Հովնայիցի ճարտասան մը:
- Իմ 9. 30. 25. 49. 20. 24. են Ասորեստանի մայրաքաղաքաց մին:
- Իմ 50. 28. 64. 53. 8. 51. են Յուդայի քաղաքաց մին:
- Իմ 48. 36. 35. են պատուոյ բառ մը:
- Իմ 63. 29. 5. են Եզովի իշխանաց մին:
- Իմ 47. 26. 27. 41. 38. 62. են իսրայելի թագաւորաց մին:
- Իմ 34. 33. 61. 29. 58. 5. են Սուրբ Գրոց մէջ յիշուած օտար երկիր մը:
- Իմ 60. 49. 43. 42. 21. են Եսայի թռչունաց մին:
- Իմ 59. 16. են Յուդայի որդւոց մին:
- Իմ 40. 31. 45. են Ե. Բ. Ե. գրեթէրը:

Մտաթիւ ԳՈՒՐԲԻ Յ. ՍՐՈՐԵԱՆՆԵ

Ամերիկայի Միտիստարց ընկերութեան կողմէն, Արտօնատէր Զ. Ք. Պիլին

Տնօրէն—Սմարտիրէ Ս. ՊԱՐՆԸՍ

Ֆինանսներու ետպաշտ Նիւ-Երկոս Խան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ԵԱՆՈՐ ԳՈՅԱՆՅԱՆ